Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
հուլիսի 4-ի N 886 -Ն որոշման

# ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## 1. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՄԲԻ ԿՈՉՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԸ

**1. Գլխարկ՝ականջակալներով, կարակուլե**

Մահուդից, բաղկացած թասակից, ականջակալներից և ճակատային մասից (հովհար): Ականջակալները և հովհարը մշակված են մոխրագույն բնական կարակուլից: Թասակը չորստապականի է, հովհարի առջևի կենտրոնական մասում ամրացվում է փոքր գլխարկանշան:

**2. Գլխարկ՝ բրդյա, ամենօրյա**

Մոխրագույն կտորից, գլխարկաբոլորքով: Կազմված է սև, լաքապատ գլխարկահովհարից և գլխարկաբոլորքից, որի վրա 2 ոսկեգույն կոճակով ամրացվում է ոսկեզօծ զարդապարան (գոտի): Գլխարկաբոլորքի վերևի և գագաթի միացման տեղով անցնում է 2մմ լայնքով՝ կարմիր մահուդից եզրաքուղ: Գագաթնամասում ամրացվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Գլխարկաբոլորքի վրա՝ առջևի կենտրոնական մասում ամրացվում են ոսկեզօծ թելերով ասեղնագործված դափնետերևներ և փոքր գլխարկանշան:

**3. Գլխարկ՝ բրդյա, տոնական**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 2-րդ կետում նկարագրված ամենօրյա բրդյա գլխարկին: Կարվում է տոնական տարազաբաճկոնի կտորից: Գլխարկահովհարի արտաքին մակերեսի վրա, առջևի մասում, 2 կողմից ոսկեզօծ թելերով ասեղնագործվում են դափնետերևներ:

**4. Վերարկու՝ ձմեռային, բրդյա, կարակուլե օձիքով, ուսադիրներով**

Մոխրագույն կտորից, համվող բնական կարակուլե օձիքով: Ձևվածքն ունի կիպ նստած ուրվագիծ: 2 լանջափեշերը կոճկվում են 3 զույգ ոսկեգույն կոճակով, 2 գրպանը՝ ներկարովի, կափույրներով: Օձիքը ծալովի է, ծայրերը՝ կարմիր եզրակարերով: Մեջքամասը՝ մեջտեղի կարով, հետևամասում՝ 2 կոճակով իրանաձիգ գոտի: Թևքերը՝ երկկարանի, ներկարված: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան: Ուսադիրները՝ կարվող մոխրագույն:

**5. Տարազաբաճկոն՝ բրդյա, պողպատագույն, տոնական, ուսադիրներով**

Երկփեշ, 6 ոսկեգույն կոճակները տեղադրվում են երկշարք: Հետծալված, կարմիր եզրակարված օձիքի վրա ոսկեզօծ թելերով ասեղնագործված է դափնեճյուղ: Թևքածալերը կարմիր եզրակարով, 2 թևքաբերանին ոսկեզօծ թելերով ասեղնագործված են դափնեճյուղեր, կարմիր եզրաքողերին զուգահեռ ասեղնագործված են ոսկեզօծ մակաշերտեր: Տարազաբաճկոնի 2 փեշի ներքևի մասերում՝ ձևավոր կափույրով ներկարված գրպաններ: Հետևամասում՝ բացվածք: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան: Ուսադիրները՝ կարվող, ոսկեզօծ:

**6. Տարազաբաճկոն՝ բրդյա, ուսադիրներով**

Մոխրագույն կտորից, միափեշ, 4 ոսկեգույն կոճակները տեղադրված են միաշարք: Հետծալված, օձիքի վրա ոսկեզօծ թելերով ասեղնագործված է դափնեճյուղ: Տարազաբաճկոնի 2 փեշի ներքևի մասերում՝ ձևավոր կափույրով ներկարված գրպաններ, կրծքամասի 2 կողմում տեղադրված են կոճակով կոճկվող կափույրով վրադիր 2 գրպաններ: Հետևամասում՝ բացվածք: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան: Ուսադիրները՝ կարվող, մոխրագույն:

**7. Բաճկոն՝ բրդյա, ուսադիրներով**

Մոխրագույն կտորից, միակողմ, շղթայով կոճկվող: Կրծքամասի 2 կողմում տեղադրված են կոճակով կոճկվող ձևավոր կափույրով վրադիր 2 գրպաններ: Մեջքամասը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ միակար թեզանիքներով և կտրվածքով: Ներքնամասում՝ 2 թեք

ներկարված գրպաններ: Թեզանիքները կոճկվում են 2 կոճակով: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան: Ուսերին՝ գոտեմակօղեր, ուսադիրները՝ հանվող, մոխրագույն:

**8. Տաբատ՝ բրդյա, ամենօրյա**

Մուգ կապույտ կտորից, ուղիղ ուրվագծով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է 2 կոճակով և շղթայով, մետաքսյա աստառով, կողագծերը՝ կարմիր եզրաքուղով և 2 սմ լայնությամբ 2 գունաժապավենով: Արտաքին գրպանները՝ ուղիղ: Հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան:

**9. Տաբատ՝ կիսաբամբակյա, ամենօրյա**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 8-րդ կետում նկարագրված ամենօրյա տաբատին:

**10. Տաբատ՝ բրդյա, տոնական**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 8-րդ կետում նկարագրված ամենօրյա տաբատին: Կարվում է մոխրագույն կտորից:

**11.Վերնաշապիկ՝ կարճաթև, ուսադիրներով**

Սպիտակ կամ մոխրագույն կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող ձևավոր կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ: Ուղիղ գոտիով, կարագծերին՝ առաձգական ժապավեններ: Հետևամասը՝ վերին կտրվածքով: Կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով: Թևքերը՝ կարճ, ուղիղ թեքածալերով: Ուսերին՝ գոտեմակօղեր՝ ուսադիրների համար:

**12. Վերնաշապիկ՝ երկարաթև, ուսադիրներով**

Սպիտակ կամ մոխրագույն կտորից, օձիքը՝ կանգուն կտրվածքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող ձևավոր կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ: Ուղիղ գոտիով, կարագծերին՝ առաձգական ժապավեններ: Հետևամասը՝ վերին կտրվածքով: Կոճկվում է 8

կոճակով: Ձախ կտրվածքը՝ շերտակարով: Թևքերը՝ երկար, 2 կոճակով կոճկվող թեզանիքներով: Ուսերին՝ գոտեմակօղեր՝ ուսադիրների համար:

**13. Փողկապ՝ սև,մոխրագույն**

Ունի լայնացած ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում՝ սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Վերնաշապիկի օձիքի տակ ամրանում է առաձգական ժապավենով և ամրակով: Երկարությունը՝ 55-57 սմ:

**14.Վզպատ թաշկինակ՝ սպիտակ, մոխրագույն**

Սպիտակ տրիկոտաժե վզպատ թաշկինակը նախատեսված է տոնական, իսկ մոխրագույնը՝ ամենօրյա համդերձանքի համար, լայնքը՝ 24 սմ, երկարությունը՝ 120 սմ:

**15. Ներքնաշոր՝ ձմեռային**

Բամբակյա կտորից, բաղկացած է ներքնաշապիկից և վարտիքից: Ձևվածքն ունի ուղիղ ուրվագիծ: Ներքնաշապիկը՝ երկարաթև, վզի բացվածքը՝ կլոր: Առաջամասում՝ մշակված փոքր բացվածք, կոճկվում է 1 կոճակով: Վարտիքի առաջամասում ունի փոքր բացվածք, իսկ հետևամասի վերին հատվածը՝ կտրվածքով: Գոտին առաջամասում կոճկվում է 2 կոճակով:

**16.Կաշվե գոտի՝ սև, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկեր ունեցող ճարմանդով**

50 մմ լայնությամբ, երկանցք մետաղյա ճարմանդը՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով:

**17. Գոտի՝ տոնական, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկեր ունեցող ճարմանդով**

Ծիրանագույն, սինթետիկ գործվածքից, մետաղյա ճարմանդը՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով:

**18. Գոտի՝ տաբատի, սինթետիկ**

35 մմ լայնությամբ, մետաղյա ճարմանդով:

**19.Կիսաճտքավոր կոշիկ՝**

Սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական առաջամասով, ճտքերի հետևամասերն ունեն երկարացված գոտի: Լեզվակը միացված է առաջամասին և ճտքերի ստորին մասին, ներբանների եզրերը վրաքաշվող մասերի հետ՝ կարերով, միացման մեթոդը՝ սոսնձով:

**20. Կոշիկ**

Սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական առաջամասով, կտրված հետևա-մասերով ամրացված գոտիով: Հետևամասերի միացումն առաջամասերին՝ առանձգական ժապավենով: Հիմնական և միջնաստառները՝ կտորից, կոշտ քթամասերը և հետևամասերը՝ արհեստական կաշվից: Ներբանը ձևավորված է պոլիուրէթանից՝ սոսնձով միացման մեթոդով:

**21.Կիսագուլպա՝ կիսաբրդյա, մուգ**

**22.Կիսագուլպա՝ բամբակյա, մուգ**

**23. Ձեռնոց՝ բրդյա սև, հինգմատնյա**

**24. Ձեռնոց՝ սինթետիկ, սպիտակ, հինգմատնյա**

**25. Թիկնոց-ուսնոց՝ կրելու գոտիով**

Մուգ, անջրանցիկ կտորից, ուղիղ ուրվագծով, օձիքը՝ կենտրոնական 5 կոճակով կոճկվող զաղտնի հանգույցով: Լանջափեշերի վրա՝ թեք ներկարված միջանցիկ բացվածքներ, հանվող գլխանոցով: Օձիքը՝ ծալովի: Մեջքամասը՝ դեպի դուրս բացվող վերին կարով:

**26.Փողկապի ամրակ**

Երկճյուղանի մետաղյա շերտիկ:

**27. Ուսկապ (աքսելբանտ)**

Ծիրանագույն լարահյուսքերով, 2 արույրե ծայրապանակով:

## 2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ, ԱՎԱԳ, ՄԻՋԻՆ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԽՄԲԵՐԻ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԸ

**28.Գլխարկ՝ ականջակալներով**

1) մահուդից, բաղկացած է թասակից, ականջակալներից և ճակատային մասից (հովիար): Ականջակալները և հովիարը մշակված են ոչխարի մոխրագույն մորթուց՝ ոստիկանության գլխավոր, ավագ և միջին կոչումներ ունեցողների համար, իսկ ոստիկանության կրտսեր կոչում ունեցողների համար՝ արհեստական մորթուց: Թասակը չորստապականի է, հովիարի առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշան.

2) մահուդից, բաղկացած է թասակից, ականջակալներից, ճակատային մասից և հովիարից: Ականջակալները մշակված են ոչխարի մոխրագույն մորթուց: Հովիարը բնական կաշվից է: Հովիարի առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշան:

**29.Գլխարկ՝ բրդյա (կիսաբրդյա), ամենօրյա**

Մոխրագույն կտորից՝ գլխարկաբոլորքով: Բաղկացած է սև լաքապատ գլխարկահովիարից, որի վրա 2 փոքր մետաղյա կոճակով ամրացված է ոսկեզօծ զարդապարան (գոտի): Գլխարկաբոլորքը՝ կարմիր: Գլխարկաբոլորքի վերևի և գագաթի միացման տեղով անցնում է 2 մմ լայնքով կարմիր մահուդից եզրակար: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է փոքր գլխարկանշան:

**30.Գլխարկ՝ բրդյա, տոնական**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 29-րդ կետում նկարագրված ամենօրյա բրդյա գլխարկին, կարվում է նույն կտորից, ինչ որ տոնական տարազաբաճկոնը և տաբատը:

**31. Կեպի՝ բամբակյա**

Մոխրագույն կտորից, հատուկ հանձնարարություններ կատարողների համար՝ սև կամ գունաքողարկված: Բաղկացած է թասակից և երկարացված գլխարկահովիարից: Երկու կողմից ունի օդանցքեր: Առջևի կենտրոնական մասում ամրացվում կամ ասեղնագործվում է

մեծ գլխարկանշան (47 մմ տրամագիծ): Առջևի մասում ասեղնագործվում կամ ամրացվում է «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառը:

**32.Վերարկու՝ ձմեռային, բրդյա, ուսադիրներով (գնդապետների համար)**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 4-րդ կետում նկարագրված ձմեռային վերարկուին՝ առանց կարակուլե օձիքի:

**33. Կիսավերարկու՝ ձմեռային, ուսադիրներով**

1) մոխրագույն կտորից, հանվող մորթե օձիքով, ուղիղ ուրվագծով և տաք ներդիրով: Կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Գոտկատեղում՝ թաքնված գոտկապարան: Թիկունքը՝ վերին կտրվածքով: Լանջափեշերի ներքևի մասում՝ մեծ վրադիր գրպաններ, իսկ վերևի մասում՝ ներկարված ձևավոր կափույրով կոճկվող փոքր գրպաններ: Թևքերը՝ գաղտնակարված թեզանիքներով: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում՝ ծոցագրպան: Ուսադիրները՝ հանվող, մոխրագույն.

2) կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, օձիքից, վրադիր և միջնադիր գրպաններից: Կիսավերարկուն մշակվում է երկու գույնի կտորից (գործվածքից): Կիսավերարկուն ունի երկշերտ տաքացուցիչ (սինտեպոն), որից առաջինը մշակվում է աստառին փախլավազարդակարման տեսքով, իսկ 2-րդ շերտը՝ աստառի հետ՝ հանովի սկզբունքով: Կիսավերարկուի առաջամասերի լանջափեշերը փակվում են շղթայի միջոցով: Կրծքերին մշակվում են շերտիկով գրպաններ, որոնք կոճկվում են մետաղյա 4 կոճգամներով: Կիսավերարկուն ունի գլխանոց, որը վզատեղին միանում է կպչուն ժապավենով: Կիսավերարկուի թևերին, օձիքին և կրծքամասին, ինչպես նաև հետևամասին մշակվում է համապատասխան չափի կպչուն ժապավեն թևքերի միջնամասում և բազկակալների կարման մասում մշակվում է երիզ: Հետևամասի կարից մշակվում է 2 սմ լայնքով 30 սմ երկարությամբ 2 հատ կպչուն ժապավեն՝ «Ոստիկանու-

թյուն» անվանումն ամրացնելու համար: Գլխանոցը վզատեղի մասում մշակվում է կպչուն ժապավենով՝ վզատեղը կոճկելու համար:

**34.Կիսավերարկու՝ ձմեռային, ուսադիրներով**

Մոխրագույն կտորից (հատուկ հանձնարարություններ կատարողներինը՝ սև կամ գունաքողարկված), համվող մորթե օձիքով, ուղիղ ուրվագծով մինչև գոտկատեղը ձգվող, գոտիով և տաք ներդիրով: Կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Թիկունքը՝ վերին կտրվածքով: Լանջափեշերի ներքևի մասում՝ թեք ներկարված գրպաններ, իսկ վերևի մասում՝ վրադիր ձևավոր կափույրով կոճկվող փոքր գրպաններ: Թևքերը զաղտնակարված թեզանիքներով: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում՝ ծոցագրպան: Ուսադիրները՝ համվող, մոխրագույն:

**35. Տարազաբաճկոն՝ կիսաբրդյա, ամենօրյա ուսադիրներով**

Մոխրագուն կտորից, միափեշ, 4 ոսկեգույն կոճակները տեղադրված են միաշարք: Տարազաբաճկոնի 2 փեշի ներքևի մասերում՝ ձևավոր կափույրով ներկարված գրպաններ: Կրծքամասի 2 կողմում տեղադրված են կոճակով կոճկվող կափոյրով վրադիր 2 գրպաններ: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան: Ուսադիրները՝ կարվող, մոխրագույն:

**36. Տարազաբաճկոն՝ բրդյա, տոնական ուսադիրներով**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 35-րդ կետում նկարագրված տարազաբաճկոնին: Ուսադիրները՝ կարվող, ոսկեզօծ:

**37. Բաճկոն՝ կիսաբրդյա, ուսադիրներով**

Մոխրագույն կտորից, միակողմ, շղթայով կոճկվող, կրծքամասի 2 կողմերում տեղադրված են վրադիր գրպաններ՝ կափույրներով: Մեջքամասը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ միակար թեզանիքներով և կտրվածքով: կոճկվում են 2 կոճակով: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան: Ուսադիրները՝ համվող, մոխրագույն:

**38. Բաճկոն՝ կիսաբամբակյա, ուսադիրներով**

Մոխրագույն կտորից, հատուկ հանձնարարություններ կատարողների համար՝ սև կամ գունաքողարկված: Թևքերը՝ թեզանիքներով, կոճակով կոճկվող: Հետ ծալվող օձիքով: 5 կոճակով կոճկվող, փեշամասերը տաբատի տակ դրվող: Կրծքամասում կոճակով կոճկվող 2 արտաքին ձևավոր կափույրով գրպաններով: Գրպանների վերևի մասում կարվում են կպչունակներ: Մեջքամասում ասեղնագործվում կամ ամրացվում է «Ոստիկանություն» բառը:

**39. Տաբատ՝ կիսաբամբակյա, ամենօրյա**

Մոխրագույն կտորից, հատուկ հանձնարարություններ կատարողների համար՝ սև կամ գունաքողարկված, ուղիղ կտրվածքով, կողքերից արտաքին թեք գրպաններ, ծնկամասերից վերև 2 արտաքին վրադիր գրպաններ, հետևում՝ կափույրով կոճկվող 2 գրպաններ: Փողքերը կիսաճտքավոր կոշիկի մեջ մտնող:

**40. Տաբատ՝ կիսաբրդյա, ամենօրյա**

1) մոխրագույն կտորից, ուղիղ ուրվագծով: Մետաքսյա աստառով, կողագծերը՝ կարմիր եզրաքուղով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է 2 կոճակով և շղթայով: Արտաքին գրպանները թեք են, տեղադրված՝ եզրաքուղից առաջ: Հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան.

2) տաբատի առաջամասերին մշակվում է յուրաքանչյուր կողմում 1 հատ սեղմոն արդուկի գծի ուղղությամբ, իսկ հետևամասի յուրաքանչյուր կողմում 2 հատ: Տաբատի գոտին 5 սմ լայնքով մշակվում է 8 կամրջակ, որոնց երկարությունը 7 սմ է, իսկ լայնությունը 1,8 սմ: Գոտու համապատասխան տեղում մշակվում է մետաղյա կոճգամ (ամրակ) կողքի գրպաններն ունեն 3,5 սմ թեքություն: Հետևամասի 2 կողմերում համապատասխան տեղերում մշակվում են երիզով և կափույրով գրպաններ, որոնք կոճկվում են 2 կոճակով: Առաջամասերին և հետևամասի որոշ հատվածում մշակվում է վրադիր գրպաններ, որոնք ունեն կափույրներ: Գրպանի կափույրները փակվում են գրպանի հետ կպչուն ժապավենով: Գրպանները բաղկացած են 3 հատվածներից, որոնք ամբողջովին զարդակարված են: Ձախ

կողմի գրպանի մուտքի մասում մշակվում են 2 սմ լայնքով և 3 սմ երկարությամբ 2 կպչունակ: Գրպաններից ներքև առաջամասին մշակվում են վրադիր կտորներ 26x26 սմ չափսի՝ ծունկն ամուր լինելու համար: Տաբատի կողքի կարերը կարվում են և զարդակարվում վրայից: Տաբատի ներքևի մասը կարվում և զարդակարվում է:

**41. Տաբատ՝ կիսաբրդյա, տոնական**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 40-րդ կետի 1-ին ենթակետում նկարագրված ամենօրյա տաբատին:

**42. Տաբատ՝ կիսաբամբակյա**

1) կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 40-րդ կետի 1-ին ենթակետում նկարագրված ամենօրյա տաբատին.

2) կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 40-րդ կետի 2-րդ ենթակետում նկարագրված ամենօրյա տաբատին:

**43. Վերնաշապիկ՝ կարճաթև և երկարաթև, ուսադիրներով**

1) կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 11-րդ և 12-րդ կետերում նկարագրված վերնաշապիկներին.

2) վերնաշապիկը բաղկացած է լանջափեշերից, թիկունքից, օձիքից և թևքերից: Լանջափեշերը կենտրոնում կոճկվում են 7 կոճակով և օղակով: Վերին կենտրոնական մասում ուղղահայաց ծալվածքով և վրադիր գրպաններ՝ իրենց կափույրներով: Գրպանները կապույտ գույնի կտորից, իսկ կափույրը՝ երկնագույն, որը կոճկվում է օղակ կոճակով: Գրպանների կենտրոնում մշակվում է 2,5 սմ չափի երիզ, որը զարդակարվում է 2 կողմերից, օձիքն իր կանգունակով՝ երկնագույն կտորից: Առաջամասի ձախ մասում ամբողջ երկայնքով մշակվում է 3 սմ լայնքով երիզ, որը երկնագույն գործվածքից է: Երիզը եզրերի մասում զարդակարվում է: Օձիքի առաջամասում երկու կողմերում մշակվում է 5 սմ երկարությամբ և 2 սմ լայնքով կպչուն ժապավեն: Կրծքի գրպանների կափույրների վերևի մասում համապատասխան չափի

մշակվում է 2 սմ լայնքով և 12,5 սմ երկարությամբ կպչուն ժապավեն: Վերնաշապիկի առաջամասի ձախ կողմում մշակվում է սև գույնի 7x7 սմ չափսի կպչուն ժապավեն: Վերնաշապիկի թևի ձախ մասում մշակվում է 9x9 սմ չափսի կպչուն ժապավեն: Վերնաշապիկի աջ մասում թևի վերևի հատվածում մշակվում է կիսալուսնի տեսքով կպչուն ժապավեն, որի ներքևի մասում խորհրդանշանի չափով մշակվում է կպչուն ժապավեն: Թիկունքի կարի տակ մշակվում է 2 հատ 2 սմ լայնքով և 30 սմ երկարությամբ կպչուն ժապավեն:

**44. Փողկապ՝ սև, մոխրագույն**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 13-րդ կետում նկարագրված փողկապին՝ առանց Հայաստանի Հանրապետության զինանշանի:

**45.Վզպատ թաշկինակ՝ սպիտակ, մոխրագույն**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 14-րդ կետում նկարագրված վզպատ թաշկինակին:

**46. Շապիկ՝ տրիկոտաժե՝**

1) ուղիղ ձևվածքով, սպիտակ, կարճաթև, կլոր օձիքով.

2) ուղիղ ձևվածքով, կապույտ, կարճաթև, կլոր օձիքով.

3) Ուղիղ ձևվածքով, կապույտ, երկարաթև, կլոր օձիքով:

**47. Ներքնաշոր՝ ամառային**

**48. Ներքնաշոր՝ ձմեռային**

**49. Գոտի՝ սև, սինթետիկ**

50 մմ լայնությամբ, երկանցք մետաղյա կամ պլաստմասսայե ճարմանդով, վրան հավաքվում են արտաքին ծառայության համար անհրաժեշտ պարագաների գրպանիկներ:

**50. Գոտի՝ տաբատի, սինթետիկ**

35 մմ լայնությամբ, մետաղյա ճարմանդով:

**51. Կոշիկ՝ կիսաճտքավոր**

1) սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական առաջամասով, ճտքերի հետնամասերն ունեն երկարացված գոտի: Լեզվակը միացված է առաջամասին և ճտքերի ստորին մասին, ճտքերի ստորին մասը սև բրեզենտե անջրանցիկ կտորից: Ներբանների եզրերը՝ վրաքաշվող մասերի հետ՝ կարերով, միացման մեթոդը՝ սոսնձով և գամերով.

2) կազմված է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճտքերից, տակամասից և կրունկից: Կոշկերեսի և հետնամասի արտաքին գոտիները 2.3մմ - 3մմ հաստությամբ բնական կաշվից (դերիմսան), լեզվակը և ճտքերը՝ բնական կաշվից, ճտքերի վրա ասեղնագործված է <<POLICE>> բառը, ճտքերի վրա կան անցքեր, քթամասը՝ կոշտ, տակամասը և կրունկները՝ մաշվադիմացկուն ռետինից.

3) կիսաճտքավոր կոշիկ ձմեռային, կազմված է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճտքերից, տակամասից և կրունկից : Կոշկերեսի և հետնամասի արտաքին գոտիները 2.3 մմ-3մմ հաստությամբ բնական կաշվից (դերիմսան), լեզվակը և ճտքերը՝ բնական կաշվից, ճտքերի վրա ասեղնագործված է <<POLICE>> բառը, քթամասը՝ կոշտ, տակամասը և կրունկները՝ մաշվադիմացկուն ռետինից, ներդիրը՝ բնական մորթուց:

**52. Կոշիկ**

1) սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական առաջամասով, կտրված հետնա-մասերով, ամրացված գոտիով: Հետնամասերի միացումն առաջամասերին՝ առաձգական ժապավենով: Հիմնական և միջնաստառները՝ կտորից, կոշտ քթամասերը և հետնամասերը՝ արհեստական կաշվից: Ներբանը ձևավորվում է պոլիուրէթանից՝ սոսնձով.

2) արտադրվում է բնական կաշվից, բաղկացած է վերնամասից, միջատակից, արտաքին ներբանից և կրունկից: Կրնկամասը՝ կոճերից ցածր, որը պետք է ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը, պետք է ունենա կողերից ձգվող ժապավեն: Քթամասը՝ կոշտ: Տակամասն առանձին կրունկով, հումքը՝ ռեզինե: Ներսի մասը բնական կաշվից, ներդիրը

կոշիկին համապատասխան կաշվից: Կոշիկը ճտքերի վրա ունի դրոշմ, որի վրա նշվում է <<POLICE>> բառը:

**53. Կիսագուլպա՝ կիսաբրդյա, մուգ**

**54. Կիսագուլպա՝ բամբակյա, մուգ**

**55. Ձեռնոց՝բրդյա, սև, հինգմատնյա կամ սինթետիկ, սպիտակ, հինգմատնյա**

**56. Ձեռնոց՝**

1) ամբողջական աղավնիով, բնական կաշվից, հինգմատնյա ամբողջական, վրան ասեղնագործված կամ տպված է աղավնի.

2) կաշվե աղավնիով, բնական կաշվից, հինգմատնյա կտրվածքով, վրան ասեղնագործված կամ տպված է աղավնի:

**57. Թիկնոց-ուսնոց՝ կրելու գոտիով**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 25-րդ կետում նկարագրված թիկնոց-ուսնոցին:

**58. Փողկապի ամրակ**

**59. Թաշկինակ**

**60. Զորանոցային հողաթափ**

**61. Զինվորական երկմատնյա ձեռնոց**

**62. Սև սպորտային գլխարկ**

**63. Սև դիմակ**

### 3. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ, ԱՎԱԳ, ՄԻՋԻՆ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԽՄԲԵՐԻ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԸ

**64. Գլխարկ՝ ականջակալներով**

Մահուդից, բաղկացած է թասակից, ականջակալներից և ճակատային մասից (հովհար):

Ականջակալները և հովհարը մշակված են ոչխարի մոխրագույն մորթուց (ոստիկանության գլխավոր, ավագ և միջին կոչումներ ունեցողների համար (արհեստական մորթուց) ոստիկանության կրտսեր կոչում ունեցողների համար): Թասակը չորստապականի է, հովհարի առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշան:

**65. Պիլոտկա**

Մոխրագույն կտորից: Կազմված է երկարացված հատակի 2 մասից, 2 պատից և 2 փեշիկից: Վերծալված եզրակարերն ավարտվում են կարմիր եզրաքուղով: Ձախ կողմում ունի օդանցքի 3 անցք: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշան:

**66. Կիսավերարկու՝ ձմեռային, ուսադիրներով**

Մոխրագույն կտորից, հանվող մորթե օձիքով, ուղիղ ուրվագծով և տաք ներդիրով: Կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Թիկունքը՝ վերին կտրվածքով: Լանջափեշերի ներքևի մասերում՝ մեծ, վրադիր գրպաններ, վերևի մասում՝ թեք ներկարված փոքր գրպաններ: Աստառը՝ սինթետիկ, ձախ կողմում ունի ծոցագրպան: Ուսադիրները՝ հանվող, մոխրագույն:

**67. Տարազաբաճկոն՝ կիսաբրդյա, ամենօրյա, ուսադիրներով**

Մոխրագույն կտորից: Միափեշ, միակող 3 ոսկեգույն կոճակով: Կրծքամասը՝ սեղմոն-ներով, փեշերի ներքևի մասերում՝ ներկարվող, կափույրով թեք գրպաններ: Թիկունքի մասում երկու կողմից՝ թևատակից մինչև փեշ կորագիծ կարով: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան: Ուսադիրները՝ կարվող, մոխրագույն:

**68. Տարազաբաճկոն՝ կիսաբրդյա, տոնական, ուսադիրներով**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 67-րդ կետում նկարագրված ամենօրյա տարազաբաճկոնին:

**69. Բաճկոն՝ կիսաբրդյա, ուսադիրներով**

Մոխրագույն կտորից, միակողմ, վրադիր օձիքով: Շղթայով կոճկվող: Կրծքամասի 2 կողմում տեղադրված են վրադիր ոսկեգույն կոճակով կոճկվող կափույրով գրպաններ: Մեջքամասը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ միակար թեզանիքներով և կտրվածքով: Թեզանիքները կոճկվում են 2 ոսկեգույն կոճակով: Ներքնամասում՝ 2 թեք ներկարված գրպաններ: Աստառը՝ մետաքսյա, ձախ կողմում ունի ծոցագրպան: Ուսադիրները՝ համվող, մոխրագույն:

**70.Կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա (կիսաբամբակյա), ամենօրյա**

Մոխրագույն կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով: Գոտին՝ գոտեմակօղերով: Հետևամասում՝ բաց ծալվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով:

**71. Կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, տոնական**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 70-րդ կետում նկարագրված կիսաշրջազգեստին:

**72. Տաբատ՝ կիսաբրդյա**

Մոխրագույն կտորից: Առաջամասը՝ մշակված սեղմոններով, գոտին՝գոտեմակօղերով, կոճկվում է ձախ կողմից՝ մեկ կոճակով և շղթայով: Մետաքսյա աստառով, կողագծերը՝ կարմիր եզրաքուղով: Արտաքին գրպանները՝ թեք: Փողքերի ծայրերը՝ թեզանիքներով:

**73. Վերնաշապիկ՝ կարճաթև, երկարաթև, ուսադիրներով**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 11-րդ և 12-րդ կետերում նկարագրված վերնաշապիկներին, ձախ շերտակարի փոխարեն կարվում է աջ շերտակար:

**74. Փողկապ՝ սև, մոխրագույն**

Ունի 2 շերտ ուղղանկյուն ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում՝ ուղղանկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Վերնաշապիկի օձիքի տակ ամրանում է առանձգական ժապավենով և ամրակով: Երկարությունը՝ 17-19 սմ:

**75.Վզպատ թաշկինակ՝ սպիտակ, մոխրագույն**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 14-րդ կետում նկարագրված վզպատ թաշկինակին:

**76. Գոտի՝ տաբատի, սինթետիկ**

Կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 50-րդ կետում նկարագրված գոտուն:

**77. Կիսաճտքավոր կոշիկ**

Սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական կամ կտրված քթամասով, երկարացված ձևավոր հետնամասերով, կրունկը՝ մինչև 55 սմ բարձրության: Ճտքերի վերնամասերը ծալված աստառի հետ միացված են փափուկ միջադիրով: Լեզվակը միացված է առաջամասին:

**78. Կոշիկ**

Սև գույնի կաշվից: Երեսամասը՝ ամբողջական, հետնամասի և առաջամասի հետ ծալված եզրերով: Ներբանը ձևավորված է պոլիուրէթանից՝ սոսնձով միացման մեթոդով: Կրունկը՝ մինչև 5 սմ բարձրության, փաթաթված երեսամասի նյութով:

79.Ներքնազգեստ՝ ամառային

80.Ներքնազգեստ՝ ձմեռային

81. Գուլպա՝ տրիկոտաժե, սև, մուգ կապույտ գույնի

82. Զուգագուլպա՝ կիսաբրդյա, կապրոնե

83. Ձեռնոց՝բրդյա, սև, հինգմատնյա

84. Ձեռնոց ՝սինթետիկ, սպիտակ, հինգմատնյա

85. Թիկնոց-ուսնոց՝ կրելու գոտիով

86.Հանդերձանքի տեսակները տրվում են ըստ հասանելիք նորմաների:

87. Փողկապը, ձեռնոցները, տաբատի գոտին, սինթետիկ սև գոտին, թիկնոց-ուսնոցը՝ իր կրելու գոտիով, և ձեռնոցները նույնն են ինչ որ ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր կոչումներ ունեցող՝ ոստիկանության ծառայող տղամարդկանց համար:

## 4. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ԳԼԽԱՎՈՐ,ԱՎԱԳ, ՄԻՋԻՆ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԽՄԲԵՐԻ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՈՒՍԱԴԻՐՆԵՐԸ

**88. Ոստիկանության բարձրագույն խմբի կոչում ունեցող ոստիկանության ծառայողների ուսադիրները**

Ուղղանկյուն, մակերեսը՝ հյուսկեն, հատուկ գործվածքով, տոնականը՝ ոսկեզօծ, կարովի ուսադիրները՝ կարմիր եզրաքուղով, հանվողները՝ առանց կարմիր եզրաքուղի, վերևամասում՝ բազմանկյուն կտրվածքով: Շնորհված կոչումներին համապատասխան ոստիկանության գեներալ-գնդապետի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա տեղադրվում են 3, գեներալ-լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ 2, գեներալ-մայորի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ մեկ ոսկեզօծ թելով ասեղնագործված, 22 մմ տրամագծով հնգաթև աստղեր: Ուսադիրներն ամրացվում են մեկական ոսկեգույն կոճակով:



**89. Ոստիկանության գլխավոր, ավագ և միջին խմբերի կոչումներ ունեցող ոստիկանության ծառայողների ուսադիրները**

1) ուղղանկյուն, մակերեսը մոխրագույն գործվածքով, կարվող ուսադիրների վերնամասը՝ կլորացված, կարմիր եզրաքուղով, հանովի ուսադիրների վերնամասը բազմանկյուն, առանց կարմիր եզրաքուղի: Ոստիկանության գնդապետի, փոխգնդապետի և մայորի կոչումներ ունեցող ծառայողները կրում են 2 մակաշերտով, իսկ կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչում ունեցող ծառայողները՝ 1 մակաշերտով ուսադիրներ.

2) շնորհված կոչմանը համապատասխան՝

ա. ոստիկանության գնդապետի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա տեղադրվում են 20 մմ տրամագծով երեք, փոխգնդապետի կոչում ունեցող ծառայողների

ուսադիրների վրա՝ երկու, մայորի կոչում ունեցող ծառայողների ուսադրիների վրա՝ մեկ, ոսկեզօծ հնգաթև աստղեր,

բ. ոստիկանության կապիտանի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա տեղադրվում են չորս, ավագ լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երեք, լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ երկու և կրտսեր լեյտենանտի կոչում ունեցող ծառայողների ուսադիրների վրա՝ մեկ 13 մմ տրամագծով ոսկեզօծ հնգաթև աստղեր.

գ. հանվող ուսադիրների վրա տեղադրվում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը: Ուսադիրներն ամրացվում են մեկական ոսկեգույն կոճակով:



**90. Ոստիկանության կրտսեր խմբի կոչում ունեցող ոստիկանության ծառայողների ուսադիրները**

1) ուղղանկյուն, մոխրագույն գործվածքով, կարվող ուսադիրների վերնամասը կլորացված, կարմիր կանտով, հանվող ուսադիրների վերնամասը բազմանկյուն, առանց մակաշերտերի և կարմիր եզրաքուղի.

2) ավագ ենթասպայի և ենթասպայի կոչում ունեցող ոստիկանության ծառայողների ուսադիրների վրա տեղադրվում են համապատասխանաբար 3 և 2 13 մմ տրամագծով ոսկեզօծ հնգաթև աստղեր.

3) ոստիկանության ավագի, ավագ սերժանտի, սերժանտի, կրտսեր սերժանտի կոչում ունեցող ոստիկանության ծառայողներն ուսադիրների վրա կրում են նշանաքուղեր՝ շնորհված կոչումներին համապատասխան, հետևյալ հերթականությամբ՝

ա. ավագ՝ մեկ լայն նշանաքուղ՝ ուսադիրի երկայնքով,

բ. ավագ սերժանտ՝ մեկ լայն նշանաքուղ՝ ուսադիրի լայնքով,

գ. սերժանտ՝ երեք նեղ նշանաքուղ՝ ուսադիրի լայնքով,

դ. կրտսեր սերժանտ՝ երկու նեղ նշանաքուղ՝ ուսադիրի լայնքով.

4) հանվող ուսադիրների վրա տեղադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը: Ուսադիրներն ամրացվում են մեկական ոսկեգույն կոճակով.



5) ոստիկանության ուսումնական հաստատությունների սովորողների ուսադիրներն ուղղանկյուն են, կարվող ուսադիրը վերնամասում կլորացված, կարմիր եզրաքուղով, հանվող ուսադիրը բազմանկյուն, առանց կարմիր եզրաքուղի: Ոստիկանության ուսումնական հաստատությունների սովորողների ուսադիրներն ունեն 2 եզրից 0,5 մմ լայնությամբ դեղին եզրագծեր.

6) հանվող ուսադիրների վրա տեղադրվում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը: Ուսադիրներն ամրացվում են մեկական ոսկեգույն կոճակով.

7) ոստիկանության ուսումնական հաստատությունների սովորողների (ունկնդիրների, կուրսանտների) ուսադիրների վրա տեղադրվում է 20 մմ բարձրությամբ ոսկեգույն «Ու» կամ «Կ» տառը:




5. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳԼԽԱՐԿԱՆՇԱՆՆԵՐԸ

**91. Մեծ գլխարկանշան՝** ունի ոճավորված հյուսածո զարդանկարի ձև, որի կենտրոնական մասում զետեղված է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը: Գրաֆիկական անցումը դեպի խորհրդանիշը պատկերված է սրակատար, բազմագագաթ աստղի ձևով: Գլխարկանշանը ներկայացված է ոսկեգույն մետաղով: Աստղի և հյուսածո զարդանկարի միջև նախատեսված է կապույտ գույնը:

**92. Փոքր գլխարկանշան՝** 35X27 մմ չափսերով և ոսկեգույն մետաղից պատրաստված օվալաձև նշան է, որի կենտրոնական մասում տեղադրված է Հայաստանի Հանրապետության

կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը՝ շրջանակված Հայաստանի Հանրապետության եռագույնի պատկերով:



## 6. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԵՎՔԱՆՇԱՆՆԵՐԸ

93. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողները համազգեստի ձախ թևքին՝ ուսակարից 80 մմ ներքև, կրում են Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը խորհրդանշող թևքանշան: Թևքանշանը՝ 80մմX95մմ չափսերով, կենտրոնում սև կտորի վրա գունավոր տպագրվում կամ ասեղնագործվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշը, որի վերևի մասում ժապավենաձև պատկերվում է Հայաստանի Հանրապետության դրոշը: Թևքանշանի վերևում տպագրվում կամ ասեղնագործվում են «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ ներքևում՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը:



94. Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողները համազգեստի աջ թևքին՝ ուսակարից 80 մմ ներքև, կրում են ծառայության բնույթը խորհրդանշող համապատասխան թևքանշաններ, որոնց նկարագրերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
հուլիսի 4-ի N 886 -Ն որոշման

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՄԲԻ ԿՈՉՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
(ՆՈՐՄԱ 1)

| NN ը/կ | Անվանումը | Քանակը | Կրելու ժամկետը | Լրացուցիչ տեղեկություններ |
|---|---|---|---|---|
| 1. | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Գլխարկ՝ ականջակալներով, կարակուլե | 1 հատ | 6 տարի | |
| 2. | Գլխարկ՝ բրդյա, ամենօրյա | 1 հատ | 3 տարի | |
| 3. | Գլխարկ՝ բրդյա,տոնական | 1 հատ | 5 տարի | |
| 4. | Վերարկու՝ ձմեռային, բրդյա, կարակուլե օձիքով, ուսադիրներով | 1 հատ | 5 տարի | |
| 5. | Տարազաբաճկոն՝ բրդյա, պողպատագույն, տոնական, ուսադիրներով | 1 հատ | 5 տարի | |
| 6. | Տարազաբաճկոն՝ բրդյա, ուսադիրներով | 1 հատ | 5 տարի | |
| 7. | Բաճկոն՝ բրդյա, ուսադիրներով | 1 հատ | 3 տարի | |
| 8. | Տաբատ՝ բրդյա, ամենօրյա | 2 հատ | 2 տարի | |
| 9. | Տաբատ՝ բրդյա,տոնական | 1 հատ | 5 տարի | |
| 10. | Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ, ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 11. | Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ, ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 12. | Վերնաշապիկ՝ երկարաթև, մոխրագույն, ուսադիրներով | 2 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 13. | Վերնաշապիկ՝ երկարաթև, մոխրագույն, ուսադիրներով | 2 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | հակառակը |
| 14. | Փողկապ՝ սև | 1 հատ | 3 տարի | |
| 15. | Փողկապ՝ մոխրագույն | 2 հատ | 3 տարի | |
| 16. | Վզպատ թաշկինակ՝ սպիտակ | 2 հատ | 4 տարի | |
| 17. | Վզպատ թաշկինակ՝ մոխրագույն | 2 հատ | 3 տարի | |
| 18. | Ներքնաշոր՝ ձմեռային | 2լրակազմ | 2 տարի | ամառային ներքնաշորի փոխարեն կարող է տրվել շապիկ (կարճաթև) կիսավարտիքով |
| 19. | Կաշվե գոտի՝ սև, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկեր ունեցող ճարմանդով | 1 հատ | 10 տարի | |
| 20. | Գոտի՝ տոնական, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկեր ունեցող ճարմանդով | 1 հատ | 15 տարի | |
| 21. | Գոտի՝ տաբատի, կաշվից | 1 հատ | 5 տարի | |
| 22. | Կիսաճտքավոր կոշիկ | 1 զույգ | 3 տարի | կիսաճտքավոր կոշիկի փոխարեն կարող է տրվել կոշիկ և հակառակը |
| 23. | Կոշիկ | 1 զույգ | 2 տարի | կիսաճտքավոր կոշիկի փոխարեն կարող է տրվել կոշիկ և հակառակը |
| 24. | Կիսագուլպա՝ կիսաբրդյա, մուգ | 1 զույգ | 1 տարի | |
| 25. | Կիսագուլպա՝ բամբակյա, սև | 2 զույգ | 1 տարի | |
| 26. | Ձեռնոց՝ սպիտակ, հինգմատնյա | 1 զույգ | 3 տարի | |
| 27. | Ձեռնոց՝ բրդյա, սև, հինգմատնյա | 1 զույգ | 2 տարի | |
| 28. | Թիկնոց-ուսնոց՝ կրելու գոտիով | 1 հատ | 7 տարի | |
| 29. | Փողկապի ամրակ | 1 հատ | 10 տարի | |
| 30. | Ուսկապ (աքսելբանտ)՝ 2 արույրե ծայրապանակով | 1 հատ | 10 տարի | |

## ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ, ԱՎԱԳ ԵՎ ՄԻՋԻՆ ԽՄԲԵՐԻ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
## (ՆՈՐՄԱ 2)

| Ը/կ | Անվանումը | Քանակը | Կրելու ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Գլխարկ՝ ականջակալներով | 1 հատ | 3 տարի | |
| 2. | Գլխարկ՝ ձմեռային | 1 հատ | 2 տարի | |
| 3. | Գլխարկ՝ կիսաբրդյա, ամենօրյա | 1 հատ | 2 տարի | |
| 4. | Գլխարկ՝ կիսաբրդյա, տոնական | 1 հատ | 5 տարի | |
| 5. | Կեպի՝ կիսաբամբակյա | 1 հատ | 2 տարի | |
| 6. | Վերարկու՝ ձմեռային, բրդյա, (գնդապետների համար) | 1 հատ | 5 տարի | |
| 7. | Կիսավերարկու՝ ձմեռային, | 1 հատ | 2 տարի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ուսադիրներով | | | |
| 8. | Կիսավերարկու (ներդիրով) ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | |
| 9. | Տարազաբաճկոն՝ կիսաբրդյա, ամենօրյա, ուսադիրներով | 1 հատ | 3 տարի | կիսաբրդյա տարազաբաճկոնի փոխարեն կարող է տրվել կիսաբրդյա բաճկոն և հակառակը |
| 10. | Տարազաբաճկոն՝ կիսաբրդյա, տոնական, ուսադիրներով | 1 հատ | 5 տարի | |
| 11. | Բաճկոն՝ կիսաբրդյա, ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | կիսաբրդյա բաճկոնի փոխարեն կարող է տրվել կիսաբրդյա տարազաբաճկոն և հակառակը |
| 12. | Տաբատ՝ կիսաբրդյա, ամենօրյա | 2 հատ | 3 տարի | արտաքին ծառայություն իրականացնող ծառայողներին 1 հատ՝ 2 տարի ժամկետով |
| 13. | Տաբատ՝ բրդյա, տոնական | 1 հատ | 5 տարի | |
| 14. | Տաբատ՝ կիսաբամբակյա | 1 հատ | 2 տարի | տրվում է միայն արտաքին ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողներին |
| 15. | Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ, ուսադիրներով | 1 հատ | 1 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 16. | Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ, ուսադիրներով | 1 հատ | 3 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 17. | Վերնաշապիկ՝ երկարաթև, մոխրագույն, երկնագույն, ուսադիրներով | 2 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 18. | Վերնաշապիկ՝ կարճաթև, մոխրագույն, ուսադիրներով | 2 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 19. | Փողկապ՝ սև | 1 հատ | 3 տարի | |
| 20. | Փողկապ՝ մոխրագույն | 2 հատ | 3 տարի | |
| 21. | Վզպատ թաշկինակ՝ սպիտակ | 2 հատ | 4 տարի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 22. | Վզպատ թաշկինակ՝ մոխրագույն | 2 հատ | 3 տարի | |
| 23. | Ներքնաշոր՝ ձմեռային | 2լրակազմ | 3 տարի | ձմեռային ներքնաշորի փոխարեն կարող է տրվել շապիկ (կիսաթև) կիսավարտիքով |
| 24. | Գոտի՝ տաբատի, սինթետիկ | 1 հատ | 5 տարի | |
| 25. | Կիսաճտքավոր կոշիկ | 1 զույգ | 2 տարի | կիսաճտքավոր կոշիկի փոխարեն կարող է տրվել կոշիկ և հակառակը |
| 26. | Կիսաճտքավոր կոշիկ՝ ձմեռային | 1 զույգ | 2 տարի | տրվում է արտաքին ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողներին |
| 27. | Կոշիկ | 1 զույգ | 1 տարի | կիսաճտքավոր կոշիկի փոխարեն կարող է տրվել կոշիկ և հակառակը |
| 28. | Կիսագուլպա՝ կիսաբրդյա, սև, մուգ | 1 զույգ | 2 տարի | |
| 29. | Կիսագուլպա՝ բամբակյա,մուգ | 2 զույգ | 1 տարի | |
| 30. | Ձեռնոց՝ սև, հինգմատնյա | 1 զույգ | 2 տարի | |
| 31. | Ձեռնոց՝ սպիտակ, հինգմատնյա | 1 զույգ | 2 տարի | |
| 32. | Ձեռնոց ամբողջական, աղավնիով | 1 զույգ | 3 տարի | |
| 33. | Ձեռնոց կաշվե, աղավնիով | 1 զույգ | 2 տարի | |
| 34. | Թիկնոց-ուսնոց՝ կրելու գոտիով | 1 հատ | 7 տարի | |
| 35. | Սուլիչ | 1 հատ | 4 տարի | |
| 36. | Փողկապի ամրակ | 1 հատ | 10 տարի | |
| 37. | Ռիսկապ՝ մեկ արույրե ծայրապանակով | 1 հատ | 10տարի | |

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ԽՄԲԻ ԿՈՉՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

( ՆՈՐՄԱ 3)

| NN ը/կ | Անվանումը | Քանակը | Կրելու ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Գլխարկ՝ականջակալներով | 1 հատ | 2 տարի | |
| 2. | Գլխարկ՝ կիսաբրդյա, ամենօրյա | 1 հատ | 2 տարի | |
| 3. | Գլխարկ՝ կիսաբրդյա, տոնական | 1 հատ | 5 տարի | |
| 4. | Կեպի՝ կիսաբամբակյա | 1 հատ | 3 տարի | |
| 5. | Կիսավերարկու՝ ձմեռային, ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | ձմեռային ուսադիրներով կիսավերարկուի փոխարեն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | (սև կամ գունաքողարկված) | | | կարող է տրվել սև կամ գունաքողարկված կիսավերարկու |
| 6. | Տարազաբաճկոն՝ կիսաբրդյա, ամենօրյա, ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | կիսաբրդյա տարազաբաճկոնի փոխարեն կարող է տրվել կիսաբրդյա բաճկոն և հակառակը |
| 7. | Տարազաբաճկոն՝ կիսաբրդյա, տոնական, ուսադիրներով | 1 հատ | 5 տարի | |
| 8. | Բաճկոն՝ կիսաբամբակյա, ուսադիրներով (սև կամ գունաքողարկված) | 1 հատ | 1 տարի | կիսաբամբակյա բաճկոնի և կիսաբամբակյա տաբատի փոխարեն կարող է տրվել սև կամ գունաքողարկված բաճկոն-տաբատ |
| 9. | Տաբատ՝ կիսաբրդյա, ամենօրյա | 2 հատ | 2 տարի | |
| 10. | Բաճկոն՝ կիսաբրդյա, ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | կիսաբրդյա բաճկոնի փոխարեն կարող է տրվել կիսաբրդյա տարազաբաճկոն և հակառակը |
| 11. | Տաբատ՝ կիսաբրդյա, տոնական | 1 հատ | 5 տարի | |
| 12. | Տաբատ՝ կիսաբամբակյա (սև կամ գունաքողարկված) | 1 հատ | 1 տարի | կիսաբամբակյա բաճկոնի և կիսաբամբակյա տաբատի փոխարեն կարող է տրվոլ սև կամ գունաքողարկված բաճկոն-տաբատ |
| 13. | Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ, ուսադիրներով | 1 հատ | 1 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 14. | Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ, ուսադիրներով | 1 հատ | 3 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 15. | Վերնաշապիկ՝ երկարաթև, մոխրագույն, ուսադիրներով | 2 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 16. | Վերնաշապիկ՝ երկարաթև, մոխրագույն, ուսադիրներով | 2 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 17. | Փողկապ՝ սև | 1 հատ | 2 տարի | |
| 18. | Փողկապ՝ մոխրագույն | 2 հատ | 2 տարի | |
| 19. | Վզպատ թաշկինակ՝ սպիտակ | 2 հատ | 4 տարի | |
| 20. | Վզպատ թաշկինակ՝ մուգ | 2 հատ | 3 տարի | |
| 21. | Ներքնաշոր՝ ձմեռային | 2լրակազմ | 2 տարի | ձմեռային ներքնաշորի փոխարեն կարող է տրվել շապիկ (կարճաթև)- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կիսավարտիքով |
| 22. | Գոտի՝ սև, սինթետիկ | 1լրակազմ | 5 տարի | |
| 23. | Գոտի՝ տաբատի, սինթետիկ | 1 հատ | 5 տարի | |
| 24. | Կիսաճտքավոր կոշիկ | 1 զույգ | 2 տարի | կիսաճտքավոր կոշիկի փոխարեն կարող է տրվել կոշիկ և հակառակը |
| 25. | Կոշիկ | 1 զույգ | 1 տարի | կիսաճտքավոր կոշիկի փոխարեն կարող է տրվել կոշիկ և հակառակը |
| 26. | Կիսագուլպա՝ կիսաբրդյա, մուգ | 2 զույգ | 2 տարի | |
| 27. | Կիսագուլպա՝ բամբակյա, մուգ | 2 զույգ | 1 տարի | |
| 28. | Ձեռնոց՝ սև, հինգմատնյա | 1 զույգ | 5 տարի | |
| 29. | Ձեռնոց՝սպիտակ, հինգմատնյա | 1 զույգ | 2 տարի | |
| 30. | Թիկնոց-ուսնոց՝ կրելու գոտիով | 1 հատ | 7 տարի | |
| 31. | Սուլիչ | 1 հատ | 4 տարի | |
| 32. | Փողկապի ամրակ | 1 հատ | 10տարի | |
| 33. | Թաշկինակ | 4 հատ | 1տարի | տրվում է միայն ոստիկանության ուսումնական հաստատությունների սովորողներին |
| 34. | Ջրանցային հողաթափ | 1 զույգ | 2 տարի | տրվում է միայն ոստիկանության ուսումնական հաստատությունների սովորողներին |
| 35. | Զինվորական երկմատնյա ձեռնոց | 1զույգ | 1 տարի | տրվում է միայն ոստիկանության ուսումնական հաստատությունների սովորողներին |
| 36. | Սև սպորտային գլխարկ | 1 հատ | 1 տարի 6 ամիս | |
| 37. | Սև դիմակ | 1 հատ | 1 տարի 6 ամիս | |

## ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ, ԱՎԱԳ, ՄԻՋԻՆ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԽՄԲԵՐԻ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԿԻՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
## (ՆՈՐՄԱ 4)

| NN ը/կ | Անվանումը | Քանակը | Կրելու ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Գլխարկ՝ ականջակալներով | 1 հատ | 3 տարի | ոստիկանության կրտսեր կոչում ունեցող ծառայողին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տրվում է արհեստական մորթուց |
| 2. | Պիլոտկա | 1 հատ | 2 տարի | |
| 3. | Վերարկու՝ ձմեռային, բրդյա (գնդապետների համար) | 1 հատ | 5 տարի | |
| 4. | Կիսավերարկու՝ ձմեռային, ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | |
| 5. | Տարազաբաճկոն՝ կիսաբրդյա, ամենօրյա, ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | կիսաբրդյա տարազաբաճկոնի փոխարեն կարող է տրվել կիսաբրդյա բաճկոն և հակառակը |
| 6. | Տարազաբաճկոն՝ կիսաբրդյա, տոնական, ուսադիրներով | 1 հատ | 5 տարի | |
| 7. | Բաճկոն՝կիսաբրդյա ուսադիրներով | 1 հատ | 3 տարի | կիսաբրդյա բաճկոնի փոխարեն կարող է տրվել կիսաբրդյա տարազաբաճկոն և հակառակը |
| 8. | Կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա | 2 հատ | 2 տարի | |
| 9. | Կիսաշրջազգեստ՝ կիսաբամբակյա | 1 հատ | 2 տարի | տրվում է արտաքին ծառայություն իրականացնող ոստիկանության ավագ և կրտսեր կին ծառայողներին |
| 10. | Կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, տոնական | 1 հատ | 5 տարի | |
| 11. | Տաբատ՝ կիսաբրդյա | 1 հատ | 2 տարի | |
| 12. | Վերնաշապիկ՝ կարճաթև, սպիտակ, ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 13. | Վերնաշապիկ՝ երկարաթև, սպիտակ, ուսադիրներով | 1 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 14. | Վերնաշապիկ՝ երկարաթև, մոխրագույն, ուսադիրներով | 2 հատ | 2 տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 15. | Վերնաշապիկ՝ կարճաթև, մոխրագույն, ուսադիրներով | 2 հատ | 2տարի | կարճաթև վերնաշապիկի փոխարեն կարող է տրվել երկարաթև վերնաշապիկ և հակառակը |
| 16. | Փողկապ՝ սև | 1 հատ | 2 տարի | |
| 17. | Փողկապ՝ մուգ կապույտ | 3 հատ | 2 տարի | |
| 18. | Վզպատ թաշկինակ՝ սպիտակ | 2 հատ | 4 տարի | |
| 19. | Վզպատ թաշկինակ՝ մոխրագույն | 2 հատ | 3 տարի | |
| 20. | Գոտի՝ տաբատի, սինթետիկ | 1 հատ | 5 տարի | |
| 21. | Կիսաճտքավոր կոշիկ | 1զույգ | 2 տարի | կիսաճտքավոր կոշիկի փոխարեն կարող է տրվել կոշիկ և հակառակը |
| 22. | Կոշիկ | 1զույգ | 1 տարի | կիսաճտքավոր կոշիկի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | փոխարեն կարող է տրվել կոշիկ և հակառակը |
| 23. | Կանացի ներքնազգեստ՝ ձմեռային | 2 հատ | 1 տարի | |
| 24. | Գուլպա՝ տրիկոտաժե, մուգ | 2 զույգ | 1 տարի | |
| 25. | Զուգագուլպա՝ կիսաբրդյա, կապրոնե | 1զույգ | 1 տարի | |
| 26. | Ձեռնոց՝ սպիտակ, հինգմատնյա | 1զույգ | 5 տարի | |
| 27. | Ձեռնոց՝ սև, հինգմատնյա | 1զույգ | 2 տարի | |
| 28. | Թիկնոց-ուսնոց՝ կրելու գոտիով | 1 հատ | 7 տարի | |
| 29. | Սուլիչ | 1 հատ | 4 տարի | |
| 30. | Փողկապի ամրակ | 1 հատ | 10 տարի | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ